

ՄԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՏԱՄՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Դեկտեմբերի 5-ին Ալ. Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ լուսահոգի Վազգեն Ա Վեհափառի անունը կրող Սևանի հոգևոր դպրանոցի հիմնադրման 10-ամյակի հոբելյանական մեծաշուք հանդիսությունը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անդամները, պեպրական բարձրաստիճան այրեր, դեպաններ, գիտության ու մշակույթի գործիչներ, բարերարներ, հյուրեր արքայազաններից և այլ հրավիրյալներ: Օպերայի շքամուտքի առջև՝ Թումանյան փողոցի կողմից, թափորը դիմավորեց Վեհափառ հայրապետին և «հրաշափառ»-ի երգեցողությամբ շարժվեց դահլիճ, որտեղ Գևորգյան ճեմարանի և Վազգենյան դպրանոցի քառաձայն երգչախմբերի կատարմամբ հնչեցին Տերունական աղոթքը և Հանրապետության օրհներգը:

«Դո՛ւ հույսի փաճար, դու լույսի կաճառ,
Անխախտ դպրեվանք դո՛ւ մեր Վազգենյան»:

Վազգենյան դպրանոցի օրհներգի այս փողերով հոբելյանական հանդիսությունն սկսեց հանդիսավար Արժանապատիվ Տ. Շահե քահանա հայրապետյանը, որը բևեռ հրավիրեց դպրանոցի տեսուչ, Հոգեշնորհ Տ. Բագրատ արեղա Գալստյանին՝ ասելու իր խոսքը.

«Վեհափառ Տեր,

Սրբազան հայրեր, սիրելի հոգևոր եղբայրներ, մեծարգո Տյարք Լսոսրով հարությունյան և պեպրական այրեր, գիտության ու կրթության հայրենական մշակներ, սիրելի հյուրեր, ներկաներ և շար-շար սիրելի նախկին և ներկա դպրեվանքցիներ.

Աստուծո՛ւ Հոգու առաջնորդությամբ, Սևանի վանքի հովանավոր Ս. Աստվածածնի բարեխոսությամբ և ազգիս աստվածընտրի հայրապետի բազմաշնորհ օրհնությամբ երկար սպասամներից, հոգեկան և մտավոր փվայտանքներից հեղու, վերջապես, արժանացանք այս շքեղեզարդ դահլիճում բոբորիդ մասնակցությամբ Սևանի Վազգենյան դպրանոցի 10-ամյակը նշելու հանդիսավոր պահին, որի հիմնադիրը Դո՛ւք եք, Վեհափառ հայրապետ: Ինձ համար անձնապես այս օրը դուրս է գալիս

սուկ փուն և հանդիսավոր արարողություն լինելու մակերեսային մակարդակից, այն մի վկայություն է՝ վկայություն կյանքի, գործի և արդյունավորության: Այն մեր, որպես տեսչություն և ուսանողություն, հանձնառության, կամքի և պարասխանավորության դրսևորում է: Հանձնառություն ի գին բոլոր ներքին և արտաքին դժվարությունների՝ Հայ Եկեղեցու և Հայրենիքի կյանքում լինել անմնացորդ ընծայյալներ: Կամք, որի առկայությամբ է միայն ու միայն խոսքը դառնում գործ, գործը՝ կյանք, ապրում ու սեր, սերը՝ իրականություն: Պարասխանավորություն. մեր ունեցած առաքելության և մեր նկատմամբ ունեցած վստահության և սիրո հանդեպ, մեր ուխտի ու խոսքումի հանդեպ և, վերջապես, այն վերջին լուծալի հանդեպ, որ մեր հավաքագյալ հայրերն ու մայրերը դնում են Հայ Եկեղեցու գանձանակի մեջ, որպես սիրո և գուրգուրանքի արտահայտություն: Վազգենյան դպրանոցն իմ պատկերացմամբ մանրակերպող կարող է լինել այսօրվա դժվարություններով ապրող Մայր Հայրենիքի: Այսինքն՝ այն ոչնչից գոյության կոչվեց և, հակառակ առաջին փորձերի դժվարին կենսապայմանների, հեքագետներ գարգացավ, աճեց թե՛ հոգևոր, և թե՛ նյութական առումով: Եվ ահա այսօր ներկայանում է որպես վավերական ու իրական հոգևոր դպրանոց: Դա Ձերը Սրբության անժխտելի սիրո, ամենօրյա գուրգուրանքի, անսասան հավաքքի և դպրեվանքի բոլոր սաների պարաստակամ, գիտակից, անփորձ ու համառության արգասիքն է՝ խորապես հավաքալով, որ հոգին է միայն կենդանարար, և ուր հոգին է, այնպեղ է ազատությունը: Պատկերացրեք միայն, որ 17-21 փարեկան երիտասարդներ իրենց հայրական փառուկ օջախներից հեռու, Սևանա կղզում ապրում են ու իրենց կյանքն են դնում Հայ Եկեղեցու փառքի սեղանին՝ այն խառնելով մեր Տիրոջ մարմնի և արյան կենդանի հաղորդությանը, դպրեվանքը դարձնելով հարազատ հայրական փուն: Այսու, մեր շնորհակալությունը բոլոր ծնողներին, ովքեր իրենց գավակներին ընծայելով են շահում, և վստահեցնում են, որ նրանք ավելի մեծ խնամք են ստանում դպրանոցի տեսչության, դասախոսների ու ողջ աշխատակազմի կողմից, որպես իրենց սեփական որդիների:

Նրանք մեր գավակներն են: Իմ երախտագետ շնորհակալությունը բոլոր նրանց, ովքեր նախանձախնդիր, առանց շահի ակնկալության, այս փասնամյա վկայությունը հանդիսության տեսքով արտահայտելու չխնայեցին ո՛չ ջանք, և ո՛չ էլ ժամանակ: Հուսկ, Վեհափա՛ն Տեր, որպես տեսչություն և ուսանողություն, մեր ամենաջերմ շնորհավորանքներն ենք հղում Ձերը Սրբությանը՝ մաղթելով բարի գահակալության երկար օրեր: Վստահ եղեք, որ Ձեր գավազանը առավել պայծառությամբ պիտի ծաղկի, և մենք, բանաստեղծի խոսքերով, «Զավակներդ Օգոստոսափառ պիտի կերտենք նոր արշալույս»:

Տեսուչ Հայր Սուրբի խոսքից հետո ելույթ ունեցավ Արամ Ղարաբեկյանի ղեկավարած նվագախումբը:

Շքեղ դահլիճում հավաքված բոլոր հոգևորականները, պեղական այրերն ու պարավաժոր հյուրերը եկել էին իրենց սրբաբազմի ու անկեղծ խոսքն ասելու Վեհափառ Հայրապետին՝ որպես Սևանի դպրանոցի հիմնադրի, փեսայական ու դասախոսական կազմին, շրջանավարտներին ու ուսանողությանը, որոնք անհավաքալին դարձրին իրական, մոռացվածը՝ ներկա, քանդվածը՝ շեն, հուշը՝ կյանք, ավերակը՝ դրախտ: Այս առթիվ ողջույնի ու շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Հայաստանում քրիստոնեության պեղական կրոն հռչակման 1700-ամյակի փոնակապարտությունների կազմակերպման պեղական հանձնաժողովի փոխնախագահ, պրն Խոսրով Հարությունյանը, որը հավարտ իր խոսքի Վազգենյան դպրանոցին նվիրեց մի պասպառ:

Այնուհետև Սևանի դպրանոցի քառաձայն երգչախումբը, ղեկավարությամբ խըմբավար Շոթա Վարդանյանի, կատարեց «Ընդրայաղ», «Էջմիածին» հոգեպարար երգերը:

Վազգենյան դպրանոցի փասնամյակը շնորհավորեց նաև Գերշ. Տ. Շահն արքեպս. Աճնայանը, որի սրբաբազմի և ոգևորիչ խոսքերին ջերմորեն արձագանքեցին հանդիսությանը ներկա գրնվող սաները, ծնողները և հյուրերը:

Անցյալ փասը փարիների դասընթացներն ու դասավանդած առաւելաները դրել են այն բոլոր հիմքերը, որ Սևանի դպրանոցի շրջանավարտներն ու ուսանողները կարողանում են իրենց գիտական անդրանիկ ուսումնասիրություններով ու հրատարակած նյութերով մեծ նպաստ բերել ոչ միայն հայագիտությանն ու ասրվածաբանությանը, այլև բանասիրությանը և դրան հարակից ճյուղերին: Նրանք արժանի հեղինակներն են փակավիին 410 թ. Սահակ-Մեթոդայան շրջանից Սևանում հիմնված վարդապետարանի ու բարձրագույն դպրոցի սրբազան ավանդների: Ահա այսօրինակ խոհերով Տ. Շահն քահանան բեմ հրավիրեց Երևանի պեղական համալսարանի ռեկտոր, պրն Աղղիկ Մարտիրոսյանին՝ շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ասելու:

«Վեհափառ Տեր,

Սրբազան Հայրեր, հայրենակիցներ.

Թույլ փվեք Երևանի պեղական համալսարանի ուսանողության, դասախոսության ողջ անձնակազմի անունից շնորհավորել Սևանի Վազգենյան դպրանոցի փասնամյա հոբելյանը: Տասը փարին կրթական հաստատության համար երկար ժամանակ չէ, սակայն այն ավանդությունները, որոնք ձևավորվել են այդ հաստատությունում, կրթության այն բարձր մակարդակ ունենալը, սաների խորը գիտելիքները, ովքեր հեղոր դրանք օգտագործելով իրենց ուսումը շարունակում են Գևորգյան ճեմարանում, խոսում է այն մասին, որ այս հաստատությունը կայացել է: Այս ամենը վկայություն է այն բանի, որ նրա հիմնադրման օրից, Հայոց Հայրապետը՝ Գարեգին

Բ-ն, կատարել է մեծ աշխատանք: Երևանի պետական համալսարանի և մեր Եկեղեցու կապերը գալիս են համալսարանի հիմնադրման օրվանից, երբ համալսարանը պակավին չուներ համապատասխան դասախոսական անձնակազմ: Այդ ժամանակ էր, որ համալսարանը հրավիրեց մեր Եկեղեցու՝ Սուրբ Էջմիածնի բարձր գիտելիքներով օժտված հոգևորականների, որոնք իրենց ներդրումը բերեցին համալսարանի կրթական գործունեությանը: Կցանկանայի հիշեցնել ձեզ իմ հայրենակից Գարեգին արքեպիսկոպոս Նովսեփյանցին, որը մեր համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի առաջին ղեկանն էր: Այդ ավանդույթը շարունակվում է նաև այսօր. ինձանից քիչ առաջ ելույթ ունեցավ Շահն արքեպիսկոպոս Աճեմյանը, որն այսօր մեր համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ղեկանն է: Նամալսարանի բոլոր սերունդները երախտապարտ են, իհարկե, մեր Եկեղեցուն այն ամենի համար, որ կատարվել է նրա հիմնադրման օրից: Եվ համալսարանականներից շար-շարտերն այսօր և մինչ այդ էլ փարբեր առարկաներ են դասավանդում Սևանի դպրանոցում և Գևորգյան ճեմարանում, շար համալսարանականներ մեր Եկեղեցու հեղափոխողների գործակցությամբ կատարում են հեղափոխիչ ուսումնասիրություններ հայագիտության ասպարեզում:

Թույլ քվեք կրկին անգամ շնորհավորել անձնակազմին այս հոբելյանի կապակցությամբ, ցանկանալ նոր հաջողություններ ուսումնական գործում: Այժմ թույլ քվեք քննադատել հանձնել Մեր ուղերձը և Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալը»:

Այնուհետև հանդես եկավ «Վերածնունդ» պարախումբը՝ մեծ բավականություն պարգևնելով ներկաներին:

Անշուշտ շարտերն են ամռան փայլից շրապում Սևան՝ վայելելու Գեղարքունյաց գեղեցկուհու գովությունը: Ձմեռը, սակայն, Սևանում ցրտաշունչ է, և պետք է խոստովանել, որ շարտերը գուցե չհիմնանային բնակլիմայական պայմաններին, հարկապես երբ դպրանոցի սկզբնավորման շրջանում կղզում դժվար լուծելի խնդիրներ էին խմելու ջուրը, վառելանյութը, ինչո՞ւ չհասնե՞ր նաև սնունդը: Չնայած այդ ամենն արդեն հիշողություն են դարձել, բայց մեր կողքին կանգնած են մարդիկ, ովքեր անսակարկ նվիրումով ու անմնացորդ սիրով հանձն առան դպրեվանքի կրթության ծանր ու պատասխանատու աշխատանքը:

Դպրեվանքի փասնամյա այս դժվարին ընթացքին անդրադարձավ հոգևոր կրթօգախի դասախոս պրն Սանդրո Բեհրուդյանը.

«Շնորհագարդ Վեհափառ Տեր,
Նարգելի հանդիսականներ.

Այսօր հավաքվել ենք նշելու Սևանի Վազգենյան դպրանոցի փասնամյակը: Իր-
բն պարունական շրջան, փասը փարին ակնթարթ է 1700-ամյա Հայ Առաքելական Ե-
կեղեցու անցած ճանապարհին, բայց լուսավորչահասարակ Սևանի մենասարանն իր
նշանակությամբ եզակի է հայ ժողովրդի սրբավայրերի շարքում: 305 թվականից
սկսած այդ մենասարանը շուրջ 17 դար ծառայել է հայ ժողովրդին, հանդիսացել դա-
րերի ճամփով քայլած, հայ աշխարհի ընդերքից անցած, հայ հողի ու հոգու հետ
շաղկապված քրիստոնեական հավաքքի ոգեղեն և լուսաբաշխ փաճար, ուր առա-
ջինը ծնրադրեց Ս. Գրիգորը, և ուր սերունդները աղոթեցին ու կրթվեցին:

Դարեր ի վեր նա ճանաչվել է իբրև երկրորդ Երուսաղեմ՝ լիովին արդարացնելով
իր այդ համարումը, սակայն 1930 թ. խորհրդային իշխանությունները մարեցին
Սևանի հոգևոր կյանքը, և միայն վեց փասնամյակ անց, 1990 թ., կամա թե ակամա
ուղղվեց այդ սխալը: Արարաբայան թեմի այն ժամանակվա շինարար առաջնորդ,
Բարձրաշնորհ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի իմաստուն և համարձակ նա-
խաձեռությամբ Լուսավորչի կանթեղի լույսը վերահասարակվեց Սևանում, բացվե-
ցին աղոթքի փաճարներ, հնչեցին եկեղեցիների զանգեր, հիմնվեց անցյալը կամրջող
հոգևոր մի նոր կրթարան, և հիմնադրի հովանավորությամբ և խստագույն պահանջ-
կոություններ արդեն փասը փարի Սևանի դպրանոցը դաստիարակում է այդ լույսի
ժառանգորդներ, որոնք նոր փեսիլքներով գալիս են վառ պահելու անհամար փորձու-
թյուններից ջրնկրկած Լուսավորչյան ջահը, իրենց բազմակողմանի գիտելիքներով,
լեզուների իմացությամբ և, որ գլխավորն է, գիտակից հայրենասիրությամբ, հա-
վաքքով ու նվիրումով միանգամայն պատրաստ են ծառայելու բազմադարյան Հայ
Եկեղեցուն, հավաքացյալ հայ ժողովրդին, լինելու «մշակք առանց ամօթոյ»:

Դպրանոցի հիմնադրման սկզբից ևեթ նրա աշխատանքների մեջ ներգրավվեցին
աստվածաբանության, հայագիտության, ընդհանրապես հասարակական գիտու-
թյունների ճանաչված մասնագետներ, որոնք այսօր շնորհաշատ փեսույց, Հոգեշնորհ
Բագրատ արեղայի գլխավորությամբ իրենց հմտությունն ու փորձը հաղորդում են
սաներին, պատրաստում Հայ Եկեղեցու արժանավոր սպասավորներ, անսասան
հավաքավորներ այնքան փոթորիկներ փեսած, այնքան արհավիրքներ հաղթահա-
րած մեր Եկեղեցու:

Սևանի դպրանոցը Գարեգին Բ Կաթողիկոսի սրբի ծաղիկն է: Վեհափառ Հայ-
րապետի ամենօրյա հոգածության, գործակից դասախոսների, պարտաճանաչ պաշ-
տոնության ներդաշնակ գործակցությամբ է հնարավոր դարձել բոլորել փասը փար-
վա բեղմնավոր ընթացքը: Դպրանոցը պարկանում է հայ ժողովրդին, և նրա պար-
վական ազգայինները միշտ պատրաստակամ են օգնելու:

Անվարան կարելի է փաստել, որ դպրանոցի շրջանավարտները միանգամայն պատրաստ են և ի գործ վառ պահելու Նայ Առաքելական Եկեղեցու հավարի ջանք՝ խորանից խորան, որպեսզի հայ հոգիները միշտ դեպի նրան սևեռված մնան, և որպեսզի բարձրանա հայ աղոթքը՝ իր խոսքի անմահարույր ծաղիկները խնկելով: Նրանք պատրաստ են վկայելու իրենց հավատքն առ Քրիստոս և հավատարմությունը Նայասարանյայց Առաքելական Եկեղեցու հանդեպ:

Նեշտը չեն եղել անցած փարիները. դպրանոցը հանդիպել է խոչընդոտների, դժվարությունների, որոնք նախկինում հաղթահարվում էին Գարեգին արքեպիսկոպոսի անհողողող կամքով ու անմիջական օգնությամբ: Նրան աջակից ու գորավիզ եղավ երջանկահիշատակ Վազգեն Առաջին Կաթողիկոսը, որ 1991 թ. այցելեց դպրանոց և նոր լիցք հաղորդեց Նայ Եկեղեցու նվիրյալների գործունեությանը: Նա մշտապես պատրաստում է. «Նայեր, սիրտ առեք... միացե՛ք սիրովը սեպուհ ազգին, եղեք միաբան, մեկ կամք, մեկ հոգի, ձեռք ձեռքի փվեք, հաստատ մնացեք Նայոց աշխարհի սեզ լեռներուն պես և հայացքը ձեր դեպի Վեհամայր Մասիսներն ի վեր, կրկին ուխտեցեք հավատարիմ մնալ Նայոց պատմության, Նայոց ազգության և հավիտենական Մայր Նայասարանին»:

Վազգենյան դպրանոցի փաստամյակը փաստորեն զուգադիպեց նրա հիմնադիր Գարեգին Բ Վեհափառ Կաթողիկոսի գահակալության առաջին փարեդարձին, որի համար ամենամեծ նվերն ու ուրախությունը, լավատեսության և ներշնչումի աղբյուրը ահա այս աճած ու բազմացած մշակներն են հունձքի, որ կանգնած են խոնարհարար: Ինչպե՛ս չհիշենք մեծ բանաստեղծի խոսքը.

Մշակ, ցանե՛-յանուն Տիրոջ նշխարին,
Թող մարերուդ յորդին սերմեր լուսեղեն,
Վաղը ամեն մեկ հասկի մեջ կաթնային
Պիտ հասուննայ մաս մ՝ Յիսուսի մարմինեն:

Այս ուրախառիթ հանդեսին Վազգենյան դպրանոցի շրջանավարտներին, այսօրվա և գալիք սաներին մատրում եմ գիտակից, անձևվեր ընթացք, որպեսզի արժանի շարունակողը լինեն Լուսավորչականոց Նայ Եկեղեցու հազարամյա ընթացքի: Լինեն անփոխարինելի Ս. Էջմիածնի արժանավոր սպասավորները և հովիվ՝ ռստ սրտին Աստուծո:

Թող հավերժ լինի դպրանոցի ճանապարհը՝ ի փառս Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցու»:

Ի վարձարություն Նայ Եկեղեցուն բերած մեծ նպաստի և Սևանի Վազգենյան դպրանոցի կայացման գործում ունեցած կարևորագույն դերի՝ պրն Մանդրո Բեհբուղ-

յանը հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից արժանացավ «Ս. Սահակ - Ս. Մարոս» շքանշանին:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ողջ ուսանողության անունից շնորհավորանքի ջերմ խոսքով իր խոհերն ու բարեմաղթանքներն արտահայտեց ճեմարանի տեսուչ, Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը.

«Գևորգյան ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ողջ ուսանողության անունից եկել ենք գնահատանքի և քրիստոնեական ջերմ սիրո խոսք ասելու մեկ փաստամյակի ընթացքում արդեն լիարժեքորեն կայացած Սևանի Վազգենյան դպրանոցի դասախոսական կազմին, ուսանողությանը՝ ի սրբե շնորհավորելով հասարակության անցած բեղմնավոր փաստամյակի առթիվ: Հոգևոր այս հասարակության փոքրիկ այս հոբելյանն ավելի է արժևորվում, երբ հասարակում ենք, որ դպրանոցն իր սաներով փասը փարի առաջ ծվարելով պարամական Սևանի մենաստանների հովանու ներքո, որպես, ի միջի այլոց, 1692 թ. շուրջ 310 փարի առաջ, փորձեց հասարակել նաև Մեծն Մխիթար վարդապետ Մեբաստացին, բայց բնական ու փեխնիկական դժվարությունները եր պահեցին Մեբաստացի վարդապետին իր ուսումնական ծրագրերի իրագործումից: Քաջատեղյակ այս ամենին՝ Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանն իրեն յուրահարուկ հեղուկականությամբ ու լավատեսությամբ, անփեսելով բնության դաժան խստությունները՝ Սևանա կղզում եղած կիսաշեն կառույցները հարմարեցնելով դպրանոցի կարիքներին, փասը փարի առաջ հավաքեց և ընտրեց իր սաներին ճիշտ այն ոգով, ինչպես մեր պարամության հեռավոր անցյալում, երբ Հայ Եկեղեցու սրբացած անհատականությունները, որոնց համար թանկ էր մեր ազգային-եկեղեցական, հոգևոր-մշակութային կյանքը, ինչպիսիք էին Եսայի Նչեցին, Հովհան Ռոպրեցին, Մովսես Տաթևացին: Գարեգին Սրբազանն էլ իր նախորդ այս մեծ վարդապետների օրինակով Գևորգյան ճեմարանում իր հոգում վառած ջահը փոխանցեց Սևանի դպրանոցի իր առաջին սաներին՝ պարավիրելով նրանց ապրել միջնադարյան վանականի համեստ պայմաններում և առավելագույնս օգտվել հրավիրված դասախոսների ավանդած գիտությունից: Հաճույքով պետք է նշել, որ առանց ավանդույթներ ունենալու հենց առաջին սերնդի Վազգենյան դպրանոցի սաների համար հնարավոր եղավ կրթության և հոգևոր դաստիարակության գործը ղնել բարձր մակարդակի վրա՝ մշակելով սաների միտքն ու հոգին, լուսավորելով մեր սուրբ Եկեղեցու հավաքքով ու ավերարանական պարավիրաններով, որով այսօր մենք ունենք փաղանգը այդ հասարակության շրջանավարտների, որոնցից շատերը համարել են կամ մոտ ապագայում կլրացնեն մեր եկեղեցականների շարքերը, կարողություն կունենան զբաղվելու գիտահետազոտական աշխատանքներով:

Վազգենյան դպրանոցի այս հաջողությունների հիմնական գրավականը անվերապահորեն նրա հիմնադրի, ուսուցչապետի խիստ, պահանջկոտ, ծույլերի և օրինախախտների նկատմամբ ունեցած անզիջում վերաբերմունքն է:

Ի սրբն ջերմագինս շնորհավորելով Սևանի Վազգենյան դպրանոցի փասնամյակի առթիվ, հայցենք փիեզերքի Արարչին, որ իր հովանին պահի դպրանոցի ժառանգավորների վրա, որպեսզի առավել շնորհագարդվեն ի հոգևորս և դառնան արժանի մշակներ «առանց ամոթի», որ կարողանան դժվարագույն մեր ժամանակներում իրենց խորը հավապքով և գիտելիքներով լրացնեն մեր հոգևոր անդաստանի նոսրացած անտառի խորարմատ և հաստատարաբուն, մեզնից ընդմիջը գնացած կաղնիներին: Թող Վազգենյան դպրանոցը ծաղկի, բարգավաճի և բեղմնավոր գործունեությամբ հասնի նորանոր հոբելյանների»:

Վերոգյան ճեմարանի քառաձայն երգչախումբը հնչեցրեց «Երկնից-գետնից», «Մոնա յար» երգերը:

Իր երախտագիտական հոգևորիս խոսքով ու ճեմարանական կյանքի հիասքանչ խորհրդածություններով հանդես եկավ դպրանոցի նախկին շրջանավարտ, այսօր Ս. Ղովհաննես եկեղեցու ծիսակատար քահանա Տ. Զավեն Մարկոսյանը.

«Վեհափա՛ն Տեր.

Երախտիքի խոսքերն ու մտքերն այս պահին անգուտպ են մեր սրբերում: Ուսանողության փարիներին, երբ գիշեր ու ցերեկ ներկա էինք դպրանոցի կյանքում, Ձեր շուրջ խմբված փեսիլքներ ու երազներ էին ծնվում Եկեղեցու, հայրենիքի, պետության շինության գործի համար: Այսօր այդ փեսիլքով վառված, որպես ուխտյալ հոգևորականներ, հաճախակի բախվում ենք իրականության կարծր ժայռերին, սակայն վարակվելով Ձերդ Սրբության կամքով, եռանդով, անմնացորդ նվիրումով, գոյեպնդված ենք և համարձակվում ենք ասելու, որ մենք անսահման երջանկություն ունենք այս մեծ ժամադրության մեջ հանդիպելու Ձեզ: Ձեր անձի քաջ և ճշմարիտ նկարագրի ծառայանվեր ոգու և բոլորանվեր գործունեության խորադիր դրոշմն առկա է մեզանից յուրաքանչյուրի կամքի մեջ: Մեզանից շարերն իրավունք ունեն խոստովանելու, որ առ Աստված հավապքի սերմերը մեր հոգիներում սերմանվել են Ձեր ձեռքով՝ հավապքի վստահությամբ, հույսի լավատեսությամբ և սիրո ջերմությամբ շարունակելու մեր ծառայությունը Նայ Եկեղեցուն, մեր ժողովրդին և հայրենի պետությանը»:

Տասնամյակի հոբելյանի կապակցությամբ դպրանոցի ուսանողներին իրենց հեզաճկուն պարով սքանչելի նվեր մատուցեցին «Նանե» պարային խմբի աղջիկները: Ապա ելույթ ունեցավ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկվոր Արամ

Իսաբելյանը՝ մի յուզաներկ կրավ նվիրելով դպրանոցին, որից հետո Սևանի դպրանոցի երգչախումբը կապարեց «Սև ա ջրբանի շունը» ժողովրդական երգը:

Չնաչխարհիկ Սևանա վանքը բոլոր դարերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բազում հայրնի ու անվանի գործիչներ է փվել: Այսպեղ իր աղոթափելին է ունեցել Հայկ Նահապետի թոռ Գեղամ հսկան: Անմիջապես գրերի գյուրից հետո Սևանա կղզում հիմնվել է դպրանոց: Սևանա վանքի վանականներից կաթողիկոսներ են ընարվել:

Այո՛, րասը րարեկան է հագարամյա Սևանի դպրանոցը: Ասրծո նախախնամությունն ենք րեսնում. այսօր Ս. Առաքելոց վանքի օրհնությամբ ծաղկում է Սևանի դարեվանքը, և Ձեզ, Վեհափա՛ն Տեր, ցանկություն ունենք դասելու Սևանա վանքի երախարավոր կաթողիկոսների շարքին»,- այսպիսի սրբատուչ խոներով ահա Տ. Շահեն քահանան բնմ հրավիրեց Գարեգին Վեհափառին: Դարեվանքցիների շուրթերից հնչեց դպրանոցի նոր գրված օրհներգը.

«Տարության լույսի խորհրդին փարված,
Խաչյալի սիրո պարգամով վառված,
Մեր սուրբ հայրերի աղոթքով սրբված՝
Քեզ ենք մենք գալիս, օջախ սրբացած:

Ասրուծո աչքն ես՝ մեր հոգում բացված,
Դարբնոց գիարության և իմասարության,
Միրո, հանճարի և ճշմարարության
Դո՛ն հույսի րաճար, դո՛ն լույսի կաճար,
Անխախար դարեվանք դո՛ն մեր Վազգենյան»:

Օրհներգից հետո Վեհափառ Հայրապետն ասաց.

«Միրելիներ՝ մեճարգո պերական այրեր, սիրելի մխարանություն Մայր Աթոռ Ս. Էջմիաճնի, հոգևոր հայրեր, հոգևոր եղբայրներ, սիրելի դասսխոսներ, սաներ, պերական համարսարանների պարավարճան ռեկրորներ, հրավիրյալ հարգարճան հյուրեր և շար սիրելի ժողովուրդ հայոց: Ինճ համար այս երեկոն՝ այս հանդիսությունը առանճևակի ուրախության, հուզումի, բերկրանքի պահ է: Մասնավոր, կարճում եմ, ճիգ ու ջանք պիրի գորճարենմ, որպեսզի երկար ջխոսեմ, առանց այդ էլ երկարող այս հանդիսությունը ավելի ջերկարացնելու համար: Գեղնցիկ հուշեր այս պահին գճարվում են իմ մրասարկերի առջև, որոնցից մի քանիսը կուզեմ փոխանցել, ներկայացնել ձեզ, թե ինչպես րարիներ առաջ, երբ այցելեցի Սևանա կղզի՝

կանգնած Խրիմյան Հայրապետի ընծայարանի շենքի առջև, հայացքս հստակ դնելով բարձունքում մենավոր կանգնած, կարծեք թե որքացած հայոց վանքերը, հանկարծ մրամոն ունեցաւ և ներշնչանքը, հոգևոր կրթական հասարակությանը օժտելու այդ մենասարանը, այդ կղզին: Վերադարձաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և խնդրանքս ներկայացրեցի երջանակահիշարակ Վազգեն Ա Ամենայն հայոց Կաթողիկոսին: Վեհափառը նայեց դեմքիս, խորհրդավոր մի ժպիտ գծագրվեց հայոց Հայրապետի դեմքին՝ Երազու՛մ ես: Պարասխանեցի՝ Վեհափառ՛, խնդրում եմք Ձեր օրհնությունը:

- Ծար լալ,- հրահանգեց հայոց Հայրապետը, և ձեռնամուխ եղաւ այնպէս Վազգենյան դպրանոցի հիմնադրման գործին: Ընդունելության քննություններն արդեն ավարտված էին Գևորգյան Ճեմարանում, շուրջ 23 սաներ դուրս էին մնացել՝ չէին հաջողել քննություններին, և ես բոլորին անխաբի հրավիրեցի Սևակի դպրանոց: Եկանք, միայն չորս քաղաքի ունեւիւք, արդեն նկարագրվեց վիճակը, և երկրաշարժի օրերից օգնություն արագած երկհարկանի մահճակալներ, որոնց վրա և առաջին շրջանում սպրեցին՝ իրենց կյանքը Սևակս այդ դպրանոցի հարկից ներս ամբողջացրեցին 23 սաները: Նշանցից երեքը միայն ունեցան այդ շնորհը շրջանավարտ լինելու Սևակի Վազգենյան Դպրանոցի և իրենց կյանքը կազմակերպելու հոգևոր ասպարեզից ներս որպէս հոգևորականներ, որպէս սպասավորներ հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Առաջին երեքը, որ գլխավորում են այս շարքը՝ Թորգոմ արեղա, Զավեն քահանա և Կարապետ քահանա, մնացրաւ ներս երկրորդ սերնդի շրջանավարտներն են, թեև նրանք միացան հետագային և միասնաբար ավարտեցին Վազգենյան Դպրանոցը: Ես անչափ ուրախ եմ և փառք ու գոհություն եմ առ Աստուծոյ բարձրացնում, որ կայացաւ Վազգենյան Դպրանոցը: Անհուն մխիթարություն եմ սպրում այն զգացումից, որ երկնից այս քահիկն դեպի այս դահիճն են իրենց հայացքը ուղղել և բերկրանք ու ցնծություն են սպրում երջանակահիշարակ Մեր ևսխորդները՝ Վազգեն Վեհափառ և Գարեգին Առաջին Կաթողիկոսները: Երազը դարձաւ իրականություն, իրականություն դարձաւ շնորհիւլ անձնվեր մանկավարժների, շնորհիւլ քաջ, արի, նվիրյալ մեր սաների: Բազում փորձությունների, վրանգների միջով անցաւ կրթական մեր կյանքը Սևակի դպրանոցում: Եղան պահեր, երբ թվում էր, թե պիտի փակվի, պիտի լուծարվի կրթական այդ հասարակությունը, բայց սերը, երազը, նպատակը, փնտխիքը, որ ունեին դպրանոցի սաներն ու դասախոսական կազմը, նրանց ոգի հաղորդեց, նրանց ուժ և կամք պարզեց հաղթահարելու այդ ամեն դժվարությունները: Դպրանոցում դասերը սկսեցինք ընդամենը երկու դասախոսով, առաջին փեսուցն էր և Մեր օգնականը՝ Խորեն արեղան: Այնուհետև եկան մեզ

միանալու Մանդրո Բեհրոդյանը և Մասուն սարկալագ Վարդանյանը, որ հեղափոխում եղավ երկրորդ րեսուսը հասարակության: Ժամանակի մեջ կարողացանք համալրել դասսփոսական ողջ կազմը ընդհի դասսփոսակերտով, որոնք իրենց ուսումնական գործը իրականացնում են Հայաստանի պետական բուհերում: Նրանք սիրով համձն առան շաքաթը ավելի քան երկու կամ երեք անգամ առավոր կանուխի ճանապարհով դեպի Սևան: Եվ դա ամռան շոգին ու ձմռան ցրտին: Երջանկախիշարակ Արամ Մահակյանը սիրում էր դժվարությունները հիշեցնել ինձ՝ սակայն միշտ Սրբազան Հայր, մեզ դարձրել էս բեռնախոյզներ: Մենում է, որ մի մրրակ րասս մեր ձեռքը և շներին լծված մի սայլակ և ողարկես դեպի Սևան: Իրապես, բազում դժվարությունների հաղթահարումով կյանք առավ Սևանի Վազգենյան Նոգևոր Դպրանոցը և սերունդ պարզեց Հայաստանյայց Առաքելական մեր Եկեղեցուն ու մեր ժողովրդին: Եվ ուրախ եմ, որ նվիրյալ ծառայության գիրակցություն ունեցող սերունդ պարզեց Սևանի Վազգենյան Դպրանոցը: Բավական է հիշարակել, որ դպրանոցի շրջանավարտները, անխորհր բոլորը, ձեռնադրվում են հոգևորականներ և իրենց կյանքը կազմակերպում հոգևոր ասպարեզից ներս, որպես սպասավորներ մեր Եկեղեցու: Անցնող հինգ-վեց րարվա շորջ հիսուն շրջանավարտներից 34-ը այսօր սպասավորում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և մեր ժողովրդին բարեպաշտ: Մենք մեծապես մխիթարված ենք՝ րեսներով ոգին այդ արհուրյան, րեսներով պարասխանարվության բարձր գիրակցությունը Սևանի Դպրանոցի շրջանավարտների և մեծ հայրենասիրությունը, որի ականատեսը ուրախությամբ եղա ընդամենը երկրորդ րարում, հիմնադրումից հերո: Արցախում ընթանում էին ազարագրական մարտերը: Բարձրացա Սևան՝ հանդիպելու ասնուց հեր, ուսանողները ներկայացան ինձ, և նրանցից մեկը խոսք խնդրեց և հանուն իր ընկերների հայրենեց ինձ, որ որոշել էն բոլորը միասին կամավոր մեկնել Արցախ, այնտեղ Արցախի հերոս մարտիկների կողքին մարտնչելու: մեղքի զգացումը ծանրացած է իրենց սրտի վրա, որ իրենց եղբայրներն այնտեղ կովում են, իսկ իրենք այստեղ՝ ուսանողական նարարանների երև կրթության, գիրության են նվիրել իրենց անձերը: Եարող եք պարկերացնել իմ վիճակը: քարոզում ենք որպես առաջնորդ ունենալ հայրենասիրական ոգի, ունենալ նվիրում դեպի հայրենիքը և դեպի ժողովորդը, և հիմա այդ ոգու դրսևորման առջև ենք կանգնած և պերք է վճիռ կայացնել: Անշուշտ ժամանակ էր պերք շահել: նվիրական էր նրանց զգացումը և շար նուրք էր պահը: Խնդրեցի, որ մի քանի օր համբերեն, որպեսզի էս կարողանամ իրենց խնդրանքը ներկայացնել Հայոց Հայրապետին՝ Վազգեն Ա Երթողիկոսին, անշուշտ բացարթելով նաև, որ նվագ կարևոր

մարտ ու պայքար նրանք չեն մղում Սևանա մենասարանում, որ վաղը նրանք, ավարտելով կրթական այդ հասարակությունը, լինելու են մարտիկները արի, քաջ, նվիրյալ մարտիկները մեր ժողովրդի հոգևոր պայքարում: Այս եղավ խորհուրդը նաև Վազգեն Վեհափառ Հայրապետի, որը փոխանցեցի սաներին, և սաները, կարծես թե, մեղքի զգացումից փոքր-ինչ թեթևացած, շարունակեցին ուսման իրենց ընթացքը Սևանի Վազգենյան Դպրանոցում: Այսօր, երբ տասը տարիներն են բոլորվել, լրացել, և մենք նշում ենք տասնամյակը Վազգենյան Դպրանոցի, քնակակառուցար իմ հոգին լցված է անհուն երասխագիտության զգացումով, և ես ուզում եմ մեկ առ մեկ Իմ շնորհակալությունը հայտնել, Իմ երասխագիտության զգացումները բերել յուրաքանչյուրին, որոնք իրենց ներդրումն ունեն Սևանի Վազգենյան Դպրանոցի կյանքում, մեր սիրելի դասախոսներին, որոնցից ամենաուրագին այդ հասարակության պրն Սանդրո Բեհրուդյանին, ուրախ եմ այս առիթով ծանուցելու, որ Հայրապետական Մեր որոշմամբ, Մեր տնօրինությամբ նրա վաստակը կրթական ասպարեզից ներս արժանացնում ենք «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» բարձրագույն շքանշանին: Մեր շնորհակալ զգացումները և օրհնությունն ենք ուզում բերել բոլոր տեսչներին, որոնք մնայուն կերպով, առանց հանգստի օրեր ունենալու, գիշեր և ցերեկ ուսանողներին հետ ապրեցին ամենահամբար, ամենադժվարին պայմաններում, որովհետև իրենք էլ այդ տեսիլքն ունեին և այդ երազը և նվիրված էին այն կյանքի կոչելու, իրականություն դարձնելու: Շնորհակալությունս բոլոր պաշտոնյաներին, որոնց ներդրումը նվազ չէ հասարակության կայացման սուրբ գործում: Իմ օրհնությունն ու զնահասպանքն եմ ուզում բերել Միացյալ Նահանգների Նյու Ջերսի քաղաքում ապրող բարերարներին՝ գլխավորությամբ Տ. Գառնիկ քին. Հայրաջյանի: Իմ աղոթքներում անուն առ անուն ես հիշում եմ նրանց:

Մեր մասնավոր զնահասպանքը և անհուն սերն ու օրհնությունն ենք ուզում բերել ներկա տեսչական կազմին՝ գլխավորությամբ մեր սիրելի Բագրատ Հայր Սուրբի, իր օգնական և երկարամյա տեսուչ Տ. Միևասին:

Վերջում ես ուզում եմ զնահասպանքս ուղղել այս երեկոյի կազմակերպիչներին, որը նույնպես գլխավորում է մեր սիրելի Հայր Սուրբը՝ Հայր Բագրատը, որի մերածումն էր և որի նախաձեռնությունն էր նշել հոբելյանական տասը տարին Սևանա Վազգենյան Դպրանոցի:

Ուզում եմ շնորհակալություն և օրհնություն բերել ձեզ բոլորիդ, ձեր մասնակցության համար, այստեղ ելույթ ունեցող անձանց և նաև ձեր ներկայությամբ մեզ ողի, իսանդավառություն պարզևող մեր բարևպաշտ զավակներին: Ես կարծում եմ, որ այս երեկոն պիտի կոր լիցք հաղորդի Սևանի Վազ-

գեներալ Դպրանոցի դասախոսներին, սաներին, որ շարունակեն իրենց ընթացքը վառ գիտակցությամբ: Իրենք որպես նվիրյալ եկեղեցականներ, որպես հավաքավոր անձեր՝ ծառայող մեր ժողովրդին, իրենց ծառայությունը պիտի բերեն զոհաբերության գիտակցությամբ: Եվ ես հավատում եմ, որ այդ ծառայությամբ մենք կարող ենք փոխել դեմքը մեր Եկեղեցու, այն մտքին մեր ժողովրդի հոգուն, Եկեղեցին վերստին դարձնել սիրելի մեր ժողովրդի, և հյուսել նորօրյա փառքը 1700-ամյա մեր Եկեղեցու:

Թող Աստված օրհնի մեզ ամենքիս, Իր հովանավոր Աջի ներքո պսակի ու պսակականի և առաջնորդի դեպի նոր երազների իրականացում, որ է՝ շինություն մեր հայրենիքի և բարօրություն մեր հավատացյալ, բարեպաշտ ժողովրդի»:

Վեհափառ Հայրապետը Սևանի Վազգենյան դպրանոցի նախկին և այսօր արդեն հոգևորականներ ձեռնադրված 15 շրջանավարտների հանձնեց ավարական վկայականներ:

Վեհափառ Նոր օրհնության խոսքից հետո հորեյական հանդիսությունը եզրափակեց դպրանոցի երգչախումբը՝ կապարելով «Հայրապետական օրհներգ»-ը և «Էջ Միածինն ի Նօրե» շարականը:

ՎԱԶԻԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ
Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի
Ե լսարանի սան